# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

27 հոկտեմբերի 2020թ. N 358-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԾԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի, 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման, հաշվի առնելով, որ բնակելի տունը հենապատն ու պարիսպները կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը, կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ, հատկացված 0.05 հեկտար մակերեսով հողամասից փաստացի ավել օգտագործվող 0.00669 հեկտար մակերեսով հողամասը համայնքի հողերի օգտագործման սխեմայով նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, նշված հողամասի օգտագործումը չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակության օգտագործմանը և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2011 թվականի դեկտեմբերի 27-ին տված N Մ-5027 արխիվային տեղեկանքը, շինարարական կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի վերաբերյալ եզրակացությունը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի լրացուցիչ վկայագրերն ու Վրեժ Ժորայի Սահակյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի թիվ 8 հասցեում գտնվող անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 3-րդ փողոց 5:

2. Ճանաչել Վրեժ Ժորայի Սահակյանի (ծնված՝ 1972 թվականի ապրիլի 13-ին) և Լիդա Եղիշի Մաղոյանի (ծնված՝ 1950 թվականի մարտի 11-ին) սեփականության իրավունքը իրենց սեփականության իրավունքով պատկանող 0.05 հեկտար մակերեսով հողամասից (ծածկագիր՝ 07-051-0138-0004) փաստացի ավել օգտագործվող 0.00669 հեկտար մակերեսով հողամասի նկատմամբ:

3.Վրեժ Ժորայի Սահակյանին և Լիդա Եղիշի Մաղոյանին սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Դարանի թաղամաս 3-րդ փողոց 5 հասցեի 0.05669 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 184.37 քմ արտաքին (162.65 քմ ներքին) մակերեսով բնակելի տունը, զուգարանը, հավաբունը, հենապատն ու պարիսպները ճանաչել օրինական:

4. Վրեժ Ժորայի Սահակյանին և Լիդա Եղիշի Մաղոյանին՝ համայնքապետարանի 900105202213 հաշվեհամարին վճարել 7821 (յոթ հազար ութ հարյուր քսանմեկ) դրամ՝ ընդհանուր 11.85 քմ արտաքին մակերեսով 2003 թվականին կառուցված զուգարանի և հավաբնի օրինականացման վճար:

5.Սույն որոշման 2-րդ կետում նշված ընդհանուր 0.05669 հեկտար մակերեսով հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, ինչպես նաև չի առաջացնում սերվիտուտ պահանջելու իրավունք:

6.Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում Բյուրեղավանի համայնքապետարանի համապատասխան հաշվեհամարին չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

7.Հաստատել որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված հողամասի ու շինությունների հատակագիծը:

8.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. նոյեմբերի 27
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հոկտեմբերի 2020թ. N 359-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 20120 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 07-Ի N 344-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Գևորգ Սուրենի Արզումանյանի դիմումը ՝ *որոշում եմ.*

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2020 թվականի հոկտեմբերի 07-ի «Նախագծման թույլտվություն (ճարտարապետահատակագծային առաջադրանք) տալու մասին» N 344-Ա որոշման մեջ կատարել լրացում՝ որոշման 1-ին կետը «ատտիճաններ վերակառուցելու» բառերից հետո լրացնել «և պարիսպ կառուցելու» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 28
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

28 հոկտեմբերի 2020թ. N 360-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 3-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 48-րդ կետերի՝ ***որոշում եմ.***

1.Ռոզաննա Սերգեյի Մելիքյանի (ծնված՝ 1960 թվականի հոկտեմբերի 09-ին) կողմից Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Վազգեն Ա Վեհափառի փողոցի ձախակողմյան մասում Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման 0.01644 հեկտար մակերեսով հողամասում (ծածկագիր՝ 07-003-0032-0027) ինքնակամ կառուցված հասարակական նպատակային նշանակության 18.23 քմ ներքին (21.28 քմ արտաքին) մակերեսով օժանդակ շինությունն ու 23.5 քմ ներքին (24.3 քմ արտաքին) մակերեսով ավտոտնակը ճանաչել Բյուրեղավան համայնքի սեփականությունը:

2.18.23 քմ ներքին (21.28 քմ արտաքին) մակերեսով օժանդակ շինությունն ու 23.5 քմ ներքին (24.3 քմ արտաքին) մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական և կատարել պետական գրանցում՝ ըստ սույն որոշման անբաժանելի մաս կազմող «ԵՐԻՑՈՒԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տված օժանդակ շինության, ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերի:

3.Օժանդակ շինությանը, ավտոտնակին և դրանց պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց 9/37:

4. Օժանդակ շինությունն ու ավտոտնակը կառուցված չեն քաղաքաշինական նորմերի էական խախտումներով, չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն առաջացնում սերվիտուտ, նրաց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

5.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ-պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALAYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 28
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 հոկտեմբերի 2020թ. N 361-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 48-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 12-ի N 17-Ն որոշմամբ հաստատված կարգը և սոցիալական աջակցության հանձնաժողովի առաջարկությունը՝ ***որոշում եմ.***

1.Սոցիալական պաշտպանության բնագավառում համայնքի ղեկավարի սեփական լիազորությունների իրականացման նպատակով համայնքի 2020 թվականի բյուջեից տրամադրել 270000 (երկու հարյուր յոթանասուն հազար) դրամ՝ Բյուրեղավան համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնություն հատկացնելու համար՝ համաձայն ***հավելվածի***։

2.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի պետ Լիդիա Պողոսյանին՝ կատարել սույն որոշման 1-ին կետում նշված գումարների հատկացումը։

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Восстановимая подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 29
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հոկտեմբերի 2020թ. N 362-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 1 ՇԵՆՔԻ ԹԻՎ 8 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի № 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ավարդ Գևորգի Մանուկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 1 շենքի թիվ 8 բնակարանի (վկայական՝ 0187499, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 1 շենք 8 բնակարան։

2.Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար։

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից։

Электронная подпись

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2020թ. հոկտեմբերի 30
ք. Բյուրեղավան

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2020 թվականի հոկտեմբերի 29-ի № 361 - Ա որոշման

# ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՀԱՏԿԱՑՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ

| ՀՀ | Ազգանուն, անուն, հայրանուն | Հասցեն | Գումարի չափը (դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Մակինյան Տանյա Հովհաննեսի | ք. Բյուրեղավան, Սարալանջ թաղամաս 3 շարք 5 տուն | 25000 |
| 2 | Կարապետյան Գոհար Միխայիլի | ք. Բյուրեղավան , 1-ին փողոց 2 շենք 27 բնակարան | 25000 |
| 3 | Ղավալյան Գևորգ Վարկեսի | ք. Բյուրեղավան, Օղակաձև փողոց 50 շենք 11 բնակարան | 25000 |
| 4 | Բաղալյան Մարիա Էդուարդի | ք. Բյուրեղավան, Օղակաձև փողոց 3 շենք 50 բնակարան | 25000 |
| 5 | Հարությունյան Մարիաննա Ժորայի | ք. Բյուրեղավան, Կոտայքի փողոց 28 շենք 59 բնակարան | 25000 |
| 6 | Սուքիասյան Անդրանիկ Թորգոմի | ք. Բյուրեղավան, Վազգեն Սարգսյան փողոց 25 շենք 19 բնակարան | 30000 |
| 7 | Խաչատրյան Սոնա Համազասպի | ք. Բյուրեղավան, Կոտայքի փողոց 48 շենք 57 բնակարան | 25000 |
| 8 | Բաղալյան Մարգո Միխայելի | ք. Բյուրեղավան , Սամվել Վարդանյան փողոց 47 շենք 27 բնակարան | 15000 |
| 9 | Հակոբյան Մանուկ Սերգեյի | ք. Բյուրեղավան, Կոտայքի փողոց 48 շենք 35 բնակարան | 25000 |
| 10 | Բարխյան Նունե Միխայիլի | ք. Բյուրեղավան, Սամվել Վարդանյան փողոց 22 շենք 49 բնակարան | 25000 |
| 11 | Միրզոև Վլադիմիր Իսահակի | ք. Բյուրեղավան, Զորավար Անդրանիկի փողոց 31 շենք 20 բնակարան | 25000 |
| Ընդամենը | | | 270 000 |

Восстановимая подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Подписано: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ